

# 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

## 1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

### 1.1.1. 2004թ. հունվար-փետրվարի համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը, ընթացիկ գներով, 2004թ. հունվար-փետրվարին կազմել է 134225.7 մլն.դրամ և աճի տեմպը 2003թ. հունվար-փետրվարի համեմատությամբ կազմել է 107.4% (2003թ. հունվար-փետրվարի ցուցանիշը 2002թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 107.5%):

ՀՆԱ-ի 7.4 տոկոսային կետով աճին ամենաշատը նպաստել են ապրանքների զուտ հարկերը (4.2 տոկոսային կետ):

ՀՆԱ-ի կառուցվածքում տնտեսության 5 բազային ճյուղերի տեսակարար կշիռը կազմել է 67.6% և 2003թ. հունվար-փետրվարի ցուցանիշի համեմատությամբ նվազել 1.5 տոկոսային կետով:

### ՀՆԱ արտադրությունը տնտեսության հիմնական բազային ճյուղերով

(%)

	Աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատ- վածի նկատմամբ		Նպաստման չափը (տոկոսային կետով) ՀՆԱ-ի հավելածին		ՀՆԱ-ի կառուցվածքը ընդամենի նկատմամբ	
	հունվար-փետրվար					
	2003	2004	2003	2004	2003	2004
ՀՆԱ-ն հիմնական գներով	109.2	103.7	7.76	3.2	86.0	83.0
այդ թվում՝						
արդյունաբերություն	107.9	94.5	2.32	-1.6	29.6	30.4
գյուղատնտեսություն	106.4	105.8	0.64	0.6	9.9	8.7
շինարարություն	118.1	108.3	1.03	0.5	6.1	5.6
տրանսպորտ և կապ	113.7	110.8	0.91	0.8	7.3	7.0
առևտուր և հանրային սնունդ	110.4	109.5	1.63	1.5	16.2	15.9
Ընդամենը, բազային ճյուղեր	109.7	102.6	6.53	1.8	69.1	67.6
Ընդամենը այլ ճյուղեր	107.1	108.2	1.23	1.4	16.9	15.4
Ապրանքների զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	98.3	130.3	-0.26	4.2	14.0	17.0
ՀՆԱ-ն, շուկայական գներով	<b>107.5</b>	<b>107.4</b>	<b>7.5</b>	<b>7.4</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

### Արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքը

(ընդամենի նկատմամբ, %)

	Հունվար- փետրվար	
	2003թ.	2004թ.
ՀՆԱ-ն, շուկայական գներով	100	100
այդ թվում՝		
ապրանքներ	45.7	44.8
ծառայություններ	40.3	38.2
ապրանքների զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	14.0	17.0